ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

10 սեպտեմբերի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

120
(2970)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԽՈՍՈՒՄ Է ՆԱԽԿԻՆՆԵՐԻՑ՝ ՄՈՌԱՆԱԼՈՎ ԻՐ ԴՊՅԱԿԸ

Ալեն Սիմոնյանը երեկ ԱԺ ամբիոնից կրկին «միացրեց հին սկավառակը» եւ խոսեց «նախկինների» կառուցած դղյակների մասին՝ չհիշատակելով իր ունեցվածքը: Սա եւս մեկ առիթ տվեց՝ հիշելու, թե ԱԺ նախագահ դառնալուց հետո ՀՀ երկրորդ պաշտոնյան ինչ ունեցվածք է կուտակել իր կամ իրեն փոխկապակցված անձանց անունով:

Գտել ենք Ալեն Սիմոնյանի կողմից շահագործվող դղյակը: Հիշեցնենք՝ մամուլը բազմիցս գրել է, որ Ալեն Սիմոնյանի մայրն ու եղբայր Կառլեն Սիմոնյանը 2020 թվականին՝ պատերազմից մեկ ամիս առաջ՝ օգոստոսին, Ջրվեժում եռահարկ առանձնատուն են ձեռք բերել 215 հազար դոլարով: Գնելուց հետո՝ Սիմոնյանները շքեղ վերանորոգել են այն:

Թեեւ երեկ Ալեն Սիմոնյանը փորձում էր հերքել իր առնչությունը դղյակի հետ, այնուամենայնիվ, ապացուցող լուսանկարներ կան, որ Ալեն Սիմոնյանը փաստացի բնակվում է հենց Ջրվեժի առանձնատանը, որին կից տեղադրված է ոստիկանական պահակակետ, ուր շուրջօրյա հսկողություն է իրականացվում: Կադրերում երեւում են նաեւ (Տե՛ս ArmLur.am կայքում) հենց Ալեն Սիմոնյանին սպասարկող ավտոմեքենաները:

Բացի Ջրվեժի առանձնատնից՝ Ալեն Սիմոնյանը 2022 թվականի ընթացքում բնակարան է ձեռք բերել Երեւանի Արշակունյաց պողոտայում կառուցվող Բյուրեղ բնակելի թաղամասում: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ Ալեն Սիմոնյանի՝ 2022 թվականի գույքի եւ եկամուտների տարեկան հայտարարագրից. 53 մլն 920 հազար դրամը նշված է որպես բնակարանի ձեռքբերման գործարքի արժեք: Բնակարանի գնման համար Ալեն Սիմոնյանն ու իր կինը՝ Մարիամ Մարգարյանը, հիփոթեքային վարկ են վերցրել ՔՊ-ական գործարար պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի ընտանիքին պատկանող «Հայէկոնոմբանկից». վարկի գումարը կազմել է 48 մլն 325 հազար դրամ:

Իսկ մինչ պաշտոնյա դառնալը Ալեն Սիմոնյանն ուներ ընդամենը 1 բնակարան:

«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի (ԱՆԻՖ) գոյության ընթացքում 2019-2023 թվականների հատկացումները՝ հիմնականում ՀՀ պետբյուջեի հաշվին, ավելացել էին՝ 240 մլն դրամից դառնալով 1 մլրդ 800 մլն դրամ. ԱՆԻՖ-ը 5 տարի գործելուց հետո լուծարվեց: «Ժողովուրդ» օրաթերթի ձեռքի տակ են հայտնվել ԱՆԻՖ-ի՝ մինչեւ 2022 թվականի հաշվետվությունները: 5 տարում ծախսվել է ավելի քան 6 մլրդ դրամ՝ աշխատավարձերի եւ դրան հավասարեցված վճարումների, հարկերի, դուստր ընկերություններում ներդրումների համար: Ներկայացնենք ԱՆԻՖ-ի «իրականացրած» ծրագրերի մասին, որոնք այդպես էլ մնացին թղթի վրա. ՀՀ կառավարության որոշմամբ՝ ներդրվել է 4 մլրդ 734 մլն ՀՀ դրամ «Էյր Արաբիա» ընկերության հետ համատեղ հիմնված ազգային ավիափոխադրող «Հայկական ազգային ավիաուղիներ» ՓԲԸ-ի («Ֆլայ Արնա») բաժնետոմսերի դիմաց վճարման համար: Մինչ լուծարումը՝ 2024 թվականի հունվարին, դադարեցվեց ԱՆԻՖ-ի ամենախոշոր նախագիծը. «Ֆլայ Արնա» ավիաընկերությունն այլեւս թռիչքներ չի իրականացնում: «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ն ավիաընկերության՝ «Հայկական ազգային ավիաուղիներ» ՓԲԸ-ի 49 % բաժնետերն էր. ԱՆԻՖ-ին էր պատկանում նաեւ Hard Rock Cafe Yerevan-ի բաժնետոմսերի 48 տոկոսը: Hard Rock Cafe Yerevan նախագծի շրջանակում ներդրվել է մոտ $2.5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք 967 մլն դրամ: Երեւանյան Hard Rock սրճարանից բացի ԱՆԻՖ-ը կամ պետական հետաքրքրությունների ֆոնդը ներդրումներ է արել մի շարք այլ նախագծերում, ինչպես, օրինակ, «Գլոբալ քոնեքթ», «Էկո ֆրեշ մաշրուս», «Սերմից ֆերմա» եւ այլն: Այս նախագծերից ներկայումս գործող է թերեւս միայն Hard Rock սրճարանը, որը գտնվում է Պուշկինի 3 հասցեում: Այն համաշխարհային Hard Rock ցանցի մասնաճյուղն է Երեւանում: Սրճարանը, ինչպես նկատում ենք, ՔՊ-ականների սիրելի վայրերից է, գուցե հենց սրանից ոգեշնչված ձգտեցին ունենալ բացօթյա սրճարան ԱԺ բակում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Երեւանի ավագանիում ՔՊ խմբակցության ավագանու անդամ Նուարդ Վարդանյանի՝ սխալներով լրացրած հայտարարագրում «տարբեր տարեթվերի նույն մեքենան» այս տարի «անհետացել» է հայտարարագրից: Բանն այն է, որ Նուարդ Վարդանյանը 2021թ. հայտարարագրում նշել էր, որ 2022 թվականին ձեռք է բերել 2018 թվականի արտադրության Ford մակնիշի մեքենա: Նույն 2021թ. հայտարարագրի համաձայն՝ Վարդանյանը Դավիթ Ավինյանից ձեռք էր բերել եւս մեկ Ford 2018 թվականի արտադրության, եւ տարվա վերջի դրությամբ նա հայտարարագրել էր 2 Ford մակնիշի մեքենա: 2022 թ. սկզբին ոչ միայն «անհետացել» է Ford-երից մեկը, այլեւ վաճառքից առաջ փոխվել է մյուս Ford-ի տարեթիվը՝ 2018 թվականի արտադրությունը դարձել է մեկ տարով նոր՝ 2019 թվականի արտադրության: Ստացվում է, որ Նուարդ Վարդանյանը իրեն պատկանող Ford մակնիշի մեքենան, որը ձեռք է բերել 2018 թվականին 4 մլն դրամով՝ գրեթե 10 հազար ԱՄՆ դոլարով, 2022 թվականին վաճառել է 13 հազար ԱՄՆ դոլարով՝ որպես 2019 թվականի արտադրության մեքենա: Այս դեպքից հետո Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ուսումնասիրություն էր սկսել, ապա ավագանու անդամից պարզաբանում էր հայցել: Իսկ այժմ, ըստ նոր տվյալների, Նուարդ Վարդանյանի հայտարարագրից «անհետացել» են ոչ միայն մեքենաները, այլ նաեւ նվիրատվություն ստացած 3 գույքից 2-ը՝ անհատական բնակելի տունը եւ նվիրատվությամբ ստացած եւս մեկ շինությունը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



Սեւանա լճի ափին գտնվող ՀՀ կառավարական ամառանոցում ՔՊ-ն Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ խնջույք է արել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ կուսակցական խնջույքին ներկա են եղել իշխանական վերնախավը՝ թե՛ պատգամավորներ, թե՛ նախարարներ, ու մինչեւ ուշ գիշեր քեֆ են արել: ՔՊ-ականները հավաքվել են ֆուրշետի սեղանի շուրջ, անկաշկանդ մթնոլորտում զրուցել, տարբեր թեմաներ քննարկել, շրջել կառավարական ամառանոցում: «Ժողովուրդ» օրաթերթին պատմեցին, որ խնջույքը բավականին ակտիվ է անցել, իշխանականներն այդ օրը շատ բարձր տրամադրությամբ են եղել, իսկ կազմակերպչական աշխատանքները Նիկոլ Փաշինյանն է իր վրա վերցրել ու իր թիմակիցների ժամանցը կազմակերպել: ՔՊ-ականները փորձել են այդ օրը քաղաքական թեմաներով իրենց շատ չծանրաբեռնել, քաղաքական ելույթներ առհասարակ չեն եղել. ովքեր որ պետք է ստանային քաղաքական հրահանգներ, ստացել են, իսկ մյուսները վայելել են Սեւանը: Հիշեցնենք՝ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր նաեւ, որ ՔՊ խնջույքի համար 1 անձը 25 հազար դրամ գումար են հավաքել:

ԶՐՈՒՅՑ

«ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԴԱԴԱՐԻ ՃՆՇԵԼ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆԸ»

ArmLur.am-ն ԱԺ-ում զրուցել է «Հայաստան» խմբակցության պատգամավոր Լևոն Քոչարյանի հետ:

-Պարոն Քոչարյան, վերջին շրջանում մամուլում շատ են տարածվում տեղեկություններ, որ իշխանական պատգամավորները խիստ պատրաստված են նոր նստաշրջանին եւ պատրաստվում են ամեն կերպ զսպել, ճնշումներ գործադրել ընդդիմադիր պատգամավորների նկատմամբ, ովքեր ավելի շատ են ընդվզում. չի բացառվում նաեւ, որ ընդհուպ կալանավորումների կգնան: Ի՞նչ կասեք այս մասին, քանի որ Ձեր անունը նույնպես շրջանառվում է այդ համատեքստում, ունե՞ք տեղեկություններ դրա վերաբերյալ:

-Չգիտեմ՝ որքանով է ճիշտ այդ հարցն ինձ տալը՝ հաշվի առնելով 2018 թվականից հետո մեր դեմ տեղի ունեցած զարգացումները, ապօրինությունները, «կարված» քրեական գործերը: Մինչեւ այժմ ինձ վրա կա քրեական գործ՝ գրեթե բոլորին հայտնի ոստիկանների դեպքը, երբ նրանք ինձ խոշտանգել են, բայց հետո այլ պատկերով է գործն ուղարկվել դատարան: Նիստերը դեռ շարունակվում են. դրանք, իհարկե, կրկես են հիշեցնում: Նմանատիպ «կարված» քրգործեր կան նաեւ իմ շատ գործընկերների հանդեպ, սակայն, իհարկե, այս ամենը նորություն չէ, եւ դեռ նման դեպքերն ավելանալու են, քանզի տուժողները որքան մարսում են այդ արհեստական դեպքերը, այնքան իշխանությունն ավելի բացահայտ դրսեւորումներով է գործում:

-Իսկ ընդդիմությունը ի՞նչ է անում՝ որպես հակազդեցություն Ձեր նշածներին:

-Ունեցանք դեպքեր, երբ մարդիկ տեղի տվեցին ճնշումներին: Եթե մարդը հասկանում է, որ չի կարող պայքարին դիմակայել, ավելի ազնիվ է մանդատը դնել եւ դուրս գալ, անկեղծ ասել, որ ճնշումներին չի կարողանում դիմանալ, սա ընդունելի է եւ ազնիվ. սակայն մեծամասնությունը վճռական է տրամադրված, ամեն բռնաճնշում մարդկանց ավելի է դրդում վճռական քայլերի, իսկ իմ համոզմունքն այն է, որ քանի այս իշխանությունները կան, վերոնշյալ ճնշումներն անխուսափելի են:

-Պարոն Քոչարյան, մեր հանրությունը որքան որ դժգոհ է իշխանությունից, նրա վարած քաղաքականությունից, նույնքան էլ դժգոհ է ընդդիմությունից, որին մանդատ է տվել, ուղարկել խորհրդարան, բայց ընդդիմությունն այդպես էլ չի կարողանում իր վերջնական նպատակին հասնել. խոսքը իշխանության հեռացման մասին է: Ի՞նչ կասեք այս ամենի վերաբերյալ, ինչո՞ւ ընդդիմությունը չի հաջողում, եւ հնարավո՞ր է՝ ինչ-որ մի փուլում քննարկեք մանդատ վայր դնելու հարցը:

-Ընդդիմության գործունեության, սխալների, օբյեկտիվության հետ կապված շատ երկար կարելի է խոսել: Սխալներ իհարկե, կան, ես ինքս, ընդհանուր առմամբ, գոհ չեմ մեզնից, քանի դեռ, ինչպես ասում եք, մեր նպատակին չենք հասել: Իսկ ինչ վերաբերում է ընտրություններին՝ մենք մասնակցել ենք ոչ թե խորհրդարանական ընդդիմություն լինելու համար, այլ իշխանության հասնելու եւ դրա միջոցով՝ խնդիրներ լուծելու, բայց ունեցանք այն, ինչ ունեցանք, դրա պատճառների մասին այժմ չխոսենք: Գուցե ինչ-որ գործողություններ սխալ են արվել, ինչ-որ քայլեր՝ ճիշտ, բայց, հավատացնում եմ, այն, ինչ արվում է, անկեղծ է արվում. գուցե ինչ-որ մի մաս համաձայն է, որ մենք խորհրդարանում լինենք, մեկ այլ հատված ուրիշ կարծիք ունի, բայց, ընդհանուր առմամբ, քանի դեռ մեր վերջնական նպատակը չի լուծվել, նշանակում է՝ բավական արդյունավետ չենք աշխատել: Պարզապես ընդդիմությունը, հատկապես Արցախի կորստից հետո, եղել է, այսպես ասած, ուրիշ ռեժիմի մեջ, քանի որ գիտակցել ենք մոտեցող արհավիրքները, տնտեսական խնդիրները: Իհարկե, մենք շատ անելիք ունենք, բայց, բարեբախտաբար, կան պատգամավորներ, որոնք ինտենսիվորեն աշխատում են առաջադրված հարցերով:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 213

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԻԶՆԵՍ Է ԽԼՈՒՄ

2018 թվականի օգոստոսի 17-ին կայացած հանրահավաքի ժամանակ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Մենք երաշխավորում ենք ներդրումների անձեռնմխելիությունը: Ես ուզում եմ ասել, որ ՀՀ-ում բիզնեսով զբաղվող որեւէ մեկն անհանգստանալու որեւէ բան չունի: Ոչ մեկի ձեռքից ոչ մի բիզնես չի խլվելու, ոչ մի գործարան եւ ունեցվածք չի խլվելու...»:

Այս հայտարարությունից ընդամենը երկու օր առաջ՝ 2018թ. օգոստոսի 14-ի լույս 15-ի գիշերը, ՊԵԿ-ը, դիմակավորված անձանց ուղեկցությամբ մտավ Հարավկովկասյան երկաթուղի ընկերություն: Փաստաթղթեր առգրավվեցին: Թե ինչեր հայտնաբերեցին, ինչու էին դիմել այդ քայլին, անհասկանալի մնաց: Սա ուղիղ միջամտություն էր բիզնեսին:

Հաջորդ ներդրումը, որը ենթարկվեց իշխանական գրոհի, այնուհետեւ խլվեց, «Սեքյուրիթի Դրիմ» ընկերությունն էր, որի տնօրենը մի քանի անգամ կալանավորվեց: Արդյունքում ընկերությունը փակվեց, ոլորտն անցավ կառավարության տնօրինմանը, տեսախցիկներն ու արագաչափերն էլ ավելացան:

Նույն ճակատագրին արժանացավ նաեւ աղբահանությամբ զբաղվող օտարերկրյա ներդրումներով աշխատող «Սանիտեկ» ընկերությունը: Ընկերությունը պարզապես փակվեց, նրա ձեռքից վերցվեց աղբատարության գործը եւ տրվեց Երեւան համայնքին: «Սանիտեկը» դիմեց միջազգային արբիտրաժային դատարան:

«Ներդրումների անձեռնմխելիություն» խոստմանն անդրադառնալիս բազմաթիվ օրինակներից հիշենք եւս մեկը՝ «Լիդիան» ընկերությունը, որը Հայաստանի հանքարդյունաբերության ամենաաղմկոտ ու ամենաքննադատված նախագծերից մեկն է՝ Ամուլսարի ոսկու հանքով: Հանքը արդեն պատրաստ էր շահագործման, երբ Հայաստանում հեղափոխություն տեղի ունեցավ: Դրանից հետո մի քանի հոգի պարզապես փակեցին հանքի ճանապարհը՝ ստանալով Նիկոլ Փաշինյանի աջակցությունը, որը խոստացել էր շահագործման ազդեցության վերաբերյալ նոր փորձաքննություններ անել: Պետությունը հատկացրեց ավելի քան 600 հազար դոլար, նոր փորձաքննություններ անցկացրեց, սակայն որեւէ խոչընդոտ չհայտնաբերեց, որը հիմք կտար՝ հանքի շահագործումը կանխելու: Այս ընթացքում ներդրողը կորցրեց միլիոնավոր դոլարներ, շուրջ 2 հազար անձ զրկվեց աշխատանքից: 5 տարվա քաշքշուկից հետո՝ 2023 թ. փետրվարին, որոշվեց, որ հանքը կաշխատի: Փոխարենը էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը հայտարարեց, որ կառավարությունն անհատույց ստանալու է «Լիդիան Արմենիա» ընկերության կանոնադրական կապիտալի 12.5%-ը: Այսինքն՝ կառավարությունը դառնում է «փայատեր» այս ընկերությունում: Առայժմ հայտնի չէ՝ ինչու՞ կամ ինչի՞ դիմաց է ընկերությունը բաժնեմասեր նվիրել կառավարությանը:

Նմանօրինակ «առեղծվածային» ճանապարհով կառավարությունը «փայատեր» դարձավ նաեւ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ»-ում: Մինչ այդ, դիմակավորված անձինք մտել էին նաեւ այս հաստատություն, եղան կալանավորումներ: Տեղի ունեցավ, ըստ երեւույթին, բիզնեսի վերաբաշխում. գործադիրը «փայ» է մտնում բիզնեսներին, ինչը նշանակում է, որ տարիներ առաջ տված խոստումը սուտ էր:

16 ՀՈԴՎԱԾԻՑ 13-Ը ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԵԼ Է

«Խաղաղության համաձայնագրի այն տեքստը, որն առաջարկել ենք, ամբողջապես համաձայնեցված տեքստ է: Ըստ էության՝ ստացվում է տեխնիկապես, որ ամբողջ տեքստը ծայրից ծայր համաձայնեցված է«, - ԱԳՆ-ում Լյուքսեմբուրգի արտգործնախարարի հետ համատեղ մամուլի ասուլիսին հայտարարեց ՀՀ արտգործնախարար Արարատ Միրզոյանը:

«Այլեւս անհամաձայնություն չունենք, այլ բան է, որ երբեմն ադրբեջանական կողմն այլ նախապայմաններ է փորձում ներառել ընդհանուր բանակցային գործընթաց: Մեր մոտեցումն այն է, որ մենք օր առաջ կարող ենք արդեն համաձայնեցված տեքստը ստորագրել», - ասաց Միրզոյանը:

ԱԳ նախարարն ասաց, որ այս պահին տեխնիկապես կա 16 հոդված, որոնցից 13-ն ամբողջապես համաձայնեցված են, 3-ը՝ մասնակի համաձայնեցված:

ԳԵՐԻՆԵՐԻ ՀԱՐՑԸ ՆԵՐԱՌՎԱԾ ՉԷ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ

Գերիների հարցը ներառված չէ խաղաղության պայմանագրի մեջ: Այս մասին լրագրողների հետ զրույցում հայտարարեց ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը:

«Գերիների հետ կապված բանակցություններն ու խոսակցությունները կան բոլոր ֆորմատներում, բոլոր հնարավոր տեղերում»,- ասաց նա: Սիմոնյանի խոսքով՝ գերիների հարցը ներառված է նոյեմբերի 9-ի հայտարարության մեջ, որտեղ Ռուսաստանն ու Ադրբեջանը պարտավորվում են ապահովել գերիների ու պահվող այլ անձանց վերադարձը:

«Բայց չեն կատարում»,- ամփոփեց նա:

ԿԶՐԿՎԵՆ ՄԱՆԴԱՏՆԵՐԻՑ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը որոշել է ավագանիում միանձնյա ղեկավարում իրականացնել եւ ձերբազատվել անդամներից: Այս հարցում նրանց հերթական անգամ «օգնության է հասել» նաեւ «Հանրային ձայն»-ը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ այսօրվա ավագանու նիստի օրակարգում ընդդիմադիր 3 անդամների մանդատից զրկելու հարց է դրված: Այսպիսով՝ ավագանու ՔՊ խմբակցության անդամ Մարատ Թոխյանը «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Գրիգոր Երիցյանին մանդատից զրկելու նախագիծ է բերել օրակարգ:

Մանդատից զրկելու հիմնավորում որպես՝ բերվում է, որ նա մեկ նստաշրջանի ընթացքում բացակայել է հանձնաժողովի նիստերի կեսից: Ավագանու անկախ անդամներ Անույշ Խուդավերդյանին ու Անուշ Գինոսյանին մանդատից զրկելու հարցը նույնպես ավագանու օրակարգում է լինելու: Նրանց հեռացնելու նախագիծ է ներկայացրել ընդդիմադիր հանդես եկող, բայց ՔՊ-ի ցանկությունները լուռումունջ կատարող «Հանրային ձայն» խմբակցությունը, որի ցուցակով էլ նրանք ընտրվել էին:

Հիշեցնենք, որ 2024 թ. փետրվարին էլ ավագանու 3 անդամները՝ «Ազգային առաջընթաց»-ից Հայկ Մարությանը, «Մայր Հայաստան»-ից Նարինե Հայրապետյանը եւ Սոնա Աղեկյանը զրկվեցին մանդատներից:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԲԼԻՆՔԵՆԸ ԿԱՅՑԵԼԻ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը սեպտեմբերի 9-10-ը կայցելի Մեծ Բրիտանիա, նա երկրի իշխանությունների հետ կքննարկի ռազմական համագործակցությունն ու Ուկրաինային օգնությունը: Այս մասին ասվում է ԱՄՆ պետդեպարտամենտի մամուլի ծառայության ղեկավար Մեթյու Միլլերի՝ շաբաթ օրը հրապարակված գրավոր հայտարարության մեջ:

Աերիկյան արտաքին քաղաքականության դեպարտամենտի ղեկավարը «սեպտեմբերի 9-10-ը կայցելի Միացյալ Թագավորություն, որտեղ ռազմավարական երկխոսություն կսկսի» երկու երկրների միջեւ:

«Լոնդոնում պետքարտուղար Բլինքենը կհանդիպի նաեւ բարձրաստիճան պաշտոնյաների հետ՝ քննարկելու կարեւոր թեմաներ, այդ թվում՝ հնդկախաղաղօվկիանոսյան տարածաշրջանը, AUKUS-ի գործընկերությունը, Մերձավոր Արեւելքը եւ Ուկրաինային աջակցելու մեր ընդհանուր ջանքերը», - նշվում է փաստաթղթում:

ՊՈՒՏԻՆԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ՔՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցը օրերս ZDF-ին տված հարցազրույցի ժամանակ ասել է, որ Ուկրաինայում հակամարտության ավարտի շուրջ քննարկումների ժամանակը արդեն եկել է:

Շոլցը նշել է, որ հիմա եկել է պահը, որ պետք է քննարկել՝ ինչպես կարելի է դուրս գալ պատերազմական վիճակից եւ հասնել խաղաղության:

Գերմանիայի կանցլերի խոսքով՝ ինքը եւ Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկին համաձայն են, որ Ռուսաստանը եւս պետք է մասնակցի խաղաղության համաժողովին, որն ամեն դեպքում տեղի է ունենալու:

Մինչ Շոլցը նման հայտարարություններ է անում, Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը պատրաստվում է հաջորդ շաբաթ մասնակցել զորավարժությունների:

Հավելենք, որ Վլադիմիր Պուտինը նաեւ հանդիպումներ է ունենալու ՌԴ անվտանգության խորհրդի անդամների եւ կառավարության անդամների հետ: Հարկ է նշել, որ Վլադիմիր Պուտինը BRICS-ում Ռուսաստանի նախագահության շրջանակներում հանդիպումներ կանցկացնի:

ՓՈԽՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ

ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ, 19 ՄԼՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2023 թվականի հոկտեմբերի 26-ի՝ Երեւան քաղաքի ավագանու արտահերթ նիստում Երեւանի փոխքաղաքապետ նշանակված Սուրեն Գրիգորյանը 2024 թվականին նոր բնակարան է հայտարարագրել:

32-ամյա փոխքաղաքապետը 2022 թվականի հաշվետու տարվա հայտարարագրի համաձայն՝ չունի որեւէ անշարժ գույք, սակայն 2024 թվականին ներկայացրած, 2023 թվականի հաշվետու տարվա եկամուտների համաձայն՝ ձեռք է բերել հիփոթեքով բնակարան:

Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 43 մլն 70 հազար դրամ: Հենց այստեղից էլ տեղեկանում ենք, որ բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդը կազմել է 42 մլն 812 հազար դրամ:

Սուրեն Գրիգորյանը տրանսպորտային որեւէ միջոց չի հայտարարագրել:

Մինչ փոխքաղաքապետ լինելը Սուրեն Գրիգորյանը Երեւանի ավագանու անդամ է եղել, 2021 թվականի ապրիլ-դեկտեմբեր ամիսներին զբաղեցրել է Հայաստանի արդարադատության փոխնախարարի պաշտոնը: Քաղաքական դաշտ է եկել 2018 թվականի հեղափոխությունից հետո՝ որպես պատգամավոր:

Մինչ այդ Գրիգորյանը զբաղվել է փաստաբանական առանձնապես ոչ լուրջ աշխատանքով եւ, ըստ ArmLur.am-ի տեղեկությունների, եղել է Ռոբերտ Քոչարյանի փաստաբանական թիմի անդամ, Արամ Օրբելյանի «Կոնցեռն Դիալոգ» փաստաբանական ընկերության իրավաբան:

Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 3 մլն 121 հազար դրամ, հաշվետու տարվա եկամուտները կազմել են 65 մլն 614 հազար դրամ:

Գրիգորյանի եկամուտներից 19 մլն 91 հազար դրամն աշխատանքի վարձատրությունն է ՀՀ «Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկից, 43 մլն 92 հազար դրամը հիփոթեքային վարկն է «Արդշինբանկ» ՓԲԸ-ից:

Գրիգորյանը նշված հիփոթեքով բնակարանի համար ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացել է 1 մլն 430 հազար դրամ, որը եկամտահարկի վերադարձի օրենքով հիփոթեքի մայր գումարի մնացորդն է:

Սուրեն Գրիգորյանը նաեւ փոխառություն է ստացել 2 մլն դրամ Ռաֆիկ Գրիգորյանից:

Վարկի մարմանն ուղղված վճարումները կազմել են 3 միլիոն 211 հազար դրամ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԺ–Ն 325 ՄԼՆ ԴՐԱՄ Է ՏՎԵԼ «ԴՎԻՆ» ՀՅՈՒՐԱՆՈՑԻՆ

«Դվին հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ն դարձել է ՔՊ-ականների սիրելի վայրը համաժողով, գիտաժողով կամ կոնֆերանս անցկացնելու համար: Հենց նման ներկայացուցչական ծառայությունների համար էլ ՀՀ Ազգային Ժողովը «Դվին հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ին տրամադրել է 325 մլն 908 հազար դրամ՝ սեպտեմբերի 12-14-ը Միջխորհրդարանական միության երիտասարդ խորհրդարանականների 10-րդ գլոբալ համաժողովի անցկացման համար:

Հետաքրքիրն այն է, որ պայմանագիրը թերթելիս հանդիպում ենք ուշագրավ գնումների. օրինակ՝ հյուրանոցի ներսում 180 դրոշ տեղադրելու համար հատկացվել է 9 մլն 360 հազար դրամ, իսկ հյուրանոցի կառույցների վրա դրոշների առկայության ապահովումն արժեցել է 495 հազար դրամ:

Համաժողովի ընթացքում օգտագործվող 6 ամբիոնն արժեցել է 969 հազար դրամ: Սեղանների եւ սավանների ապահովումն արժեցել է 4,5 մլն դրամ: Համաժողովի ընթացքում թարգմանիչների համար նախատեսել են 17 մլն 757 հազար դրամ:

Նշված գումարի մեջ ներառված է նաեւ գովազդային ծառայությունները՝ գրեթե 3,5 միլիոն եւ ավելի: Միջխորհրդարանական միության երիտասարդ խորհրդարանականների 10-րդ գլոբալ համաժողովի անցկացման համար նախատեսված 350 էկո պայուսակներն արժեցել են 1 մլն 50 հազար դրամ, 5000 էկո բաժակն արժեցել է 110 հազար դրամ, 350 էկո թերմոսն արժեցել է 2 մլն 450 հազար դրամ, 350 հազար հատ գրիչը՝ 175 հազար դրամ, նոթատետրերը՝ 329 հազար դրամ: Բրոնզե 300 մեդալներն արժեցել են 6 մլն դրամ:

Համաժողովի մասնակիցների եւ անձնակազմի սննդի ապահովումն արժեցել է 63 մլն դրամ:

Միջխորհրդարանական միության երիտասարդ խորհրդարանականների 10-րդ գլոբալ համաժողովի փակման հանդիսավոր արարողության համար հատկացվել է 6,1 մլն դրամ, իսկ երեկոյին հանդես են գալու Արման Մարգարյանը, Միքայել Ոսկանյանը, Կամո Սեյրանյանը, «Ռելաքս Փրոջեքթ»-ը, Բերդ պարային համույթը:

Հիշեցնենք, որ «Դվին հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի սեփականատեր Արտակ Թովմասյանը 2020-2021 թվականներին ակտիվ ընդդիմադիր քայլեր էր իրականացնում, քաղաքականության մեջ ներգրավվելու հայտարարություններ անում: 2020 թվականի դեկտեմբերին մեծ աղմուկով սպիտակ վրաններ տեղադրեցին եւ Հայաստանը փրկելու քայլեր էին ձեռնարկում:

Աստիճանաբար իշխանական ճնշումների արդյունքում Արտակ Թովմասյանը հեղափոխվեց սպիտակ վրանների գաղափարից եւ դարձավ ներկայիս իշխանությունների սիրելին:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՉԻ ՈՒԶՈՒՄ ՀԱՆԴԻՊԵԼ ԱՀ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԵՏ

«Եթե դուք ասում եք, որ Արցախի լուծարման փաստաթուղթը վավեր չէ, ինչի՞ էիք ամեն ինչ անում, որ Արցախի ժողովուրդը դուրս գա Արցախից», - դիմելով ընդդիմությանը՝ հարցրեց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը:

«Ասեիք՝ վավեր չէ, ինչո՞ւ էիք համոզում, որ հանձնեն Արցախը: Ինչո՞ւ գնացիք դաշնակներով նախագահ ընտրեցիք, ով լուծարեց: Ես ձեր տրամաբանությունը չեմ հասկանում, դուք հասկանո՞ւմ եք: Հիմա ընդդիմությունը մեզ առաջարկում է, որ մենք հանդիպենք Արցախի՝ Լեռնային Ղարաբաղի, պատգամավորների հետ: Ես առանձնապես ցանկություն չունեմ հանդիպելու ԼՂ պատգամավորների հետ, դուք լսե՞լ եք, թե նրանք ինչ լեքսիկոնով ու ինչ բառամթերքով են խոսում ՀՀ ժողովրդի կողմից ընտրված ԱԺ մեծամասնության մասին: Խայտառակություն: Ու դուք մտածո՞ւմ եք, որ մենք իրենց հետ պետք է հանդիպե՞նք: Իրենց հետ առաջին հերթին պետք է իրավապահ մարմինները հանդիպեն»,-հայտարարեց նա:

ԴԵՊՔ՝ ԲԱՆԱԿՈՒՄ. ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

ԿՐԱԿ Է ԱՐՁԱԿԵԼ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

ՀՀ ֆինչական կոմիտեի զինվորական ֆինչական գլխավոր վարչության վեցերորդ կայազորային ֆինչական բաժնում՝ ՀՀ ՊՆ N զորամասի պարտադիր ժամկետային զինծառայողի կողմից անդամախեղում կատարելու նախնական իրավական գնահատականով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում իրականացված աղացուցողական եւ վարութային մեծածավալ գործողությունների արդյունքում պարզվել են դեպքի իրական հանգամանքները:

2023 թ. սեպտեմբերի 19-ին ահազանգ է ստացվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 11:10-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող Ա.Գեւորգյանը նույն հենակետի մեկ այլ պայմանագրային զինծառայողին ամրակցված «ԱԿՄ» տեսակի ինքնաձիգով կատարել է անդամախեղում՝ աջ ոտքի շրջանում մեկ կրակոց արձակելով, որի հետեւանքով զինվորական ծառայության պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցվել են:

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 528-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում իրականացված բազմակողմանի քննությամբ ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորվել է, որ ՀՀ ՊՆ N զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Վ.Մ.-ն, 2023 թ. օգոստոսի 31-ից որպես դիտորդ ընդգրկված լինելով մարտական հերթապահության նույն զորամասի պահպանության տեղամասում գտնվող մարտական դիրքում, սեպտեմբերի 19-ին՝ժամը 11:00-ի սահմաններում, մարտական դիրքում, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ չկապված, ոտնաթաթն անզգուշությամբ տրորելու հարցի վերաբերյալ վիճաբանել է ավագի օգնական, պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Ա.Գ.-ի հետ:

Այդ ընթացքում իր պարտականությունները կատարելու փոխարեն դրսեւորելով զինվորական պատվի հասկացողության եւ զինծառայողների արժանապատվության հետ անհամատեղելի վարքագիծ՝ Վ.Մ.-ն մարտական դիրքի զինաբուրգից վերցրել է նույն մարտական դիրքի ավագին ամրակցված «ԱԿՄ» տեսակի ինքնաձիգը, բացել է զենքի ապահովիչը, լիցքավորել այն եւ մենահատ մեկ կրակոց է արձակել դեպի օդ: Ապա մեկ մենահատ կրակոց է արձակել Ա.Գ.-ի ուղղությամբ՝ վերջինիս առողջությանը պատճառելով ծանր վնաս:

Դեպքից անմիջապես հետո Վ.Մ.-ն լիցքաթափել է նշված ինքնաձիգը, փամփշտանոցից դուրս եկած փամփուշտ տեղադրել պահեստատուփի մեջ, իսկ պահեստատուփն ամրացրել ինքնաձիգին, որից հետո ինքնաձիգը տվել է Ա.Գ.-ին, որպեսզի վերջինիս մատնահետքերը մնան ինքնաձիգի վրա: Այնուհետեւ Վ.Մ.-ն նետել է գետնին հայտնաբերված կրակված գնդակը եւ դիրքի անձնակազմին հորդորել, որպեսզի դեպքը ներկայացնեն այնպես, թե իբր Ա.Գ.-ն ինքն է պատահաբար կրակել իր ոտքին: Բացի այդ, կրտսեր սերժանտ Վ.Մ.-ն դիրքի անձնակազմից երկու զինծառայողի հանձնարարել է մաքրել Ա.Գ.-ի ոտքից թափված արյունը՝ դեպքի իրական հանգամանքները թաքցնելու համար:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Վ.Մ.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 519-րդ հոդվածի 1-ին մասով եւ 166-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով: Վերջինս կալանավորվել է:

Նախաքննությունն ավարտվել է, եւ քրեական վարույթի նյութերը, մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատախազին՝ հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

Ք. Մ.

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՀԱՑԱԴՈՒԼԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԸ ՊԱՏՄՈՒՄ Է

Արմավիրի բանտում 5 օր (խմբ.) հացադուլի մեջ գտնվող Արամ Սաֆարյանը ArmLur.am-ի հետ զրույցում պատմել է, թե ինչ իրավիճակ է բանտում եւ ինչ է կատարվում կալանավորների ու դատապարտյալների շրջանում:

ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Արմավիրի բանտում մի խումբ դատապարտյալներ 30 օրից ավելի է՝գտնվում են հացադուլի մեջ:

Ըստ ArmLur.am-ին հասած լուրերի՝ նրանց մեկուսացրել են բանտի կարանտինային մասնաշենքի 1-ին խցում: Հացադուլ հայտարարած դատապարտյալներն են՝ Սաֆարյան Արամ Վարուժանի, Թադեւոսյան Արման Հակոբի, Բավցյան Բախշի Ռուբիկի, Նազարյան Գեղամ:

Ավելին՝ հացադուլ անողներից մեկի վիճակը, ըստ դատապարտյալների, ծանր է. նրան պատշաճ բուժօգնություն չեն տրամադրում, հարցին լուծում չեն տալիս եւ տեղյակ չեն պահում համապատասխան մարդկանց նրանց հացադուլի վերաբերյալ, շատ վատ են վերաբերվում ու հնարավորություն չեն տալիս խնդիրն իրավասու մարմիններին հայտնել:

ArmLur.am-ը դիմեց քրեակատարողական ծառայություն, որտեղից քրեակատարողական ծառայության հանրային կապերի բաժնի պետ Նոնա Նավիկյանը հայտնեց. «ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում սեպտեմբերի 8-ի դրությամբ հացադուլի մեջ են գտնվում 2 կալանավորված անձ եւ 2 դատապարտյալ:

Կալանավորված անձանցից մեկը հացադուլ է հայտարարել օգոստոսի 9-ից, մյուսը՝ սեպտեմբերի 6-ից: Նրանք անհամաձայնություն ունեն իրենց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցի առնչությամբ:

Դատապարտյալներից մեկը հացադուլ է հայտարարել օգոստոսի 16-ից: Պատճառն այն է, որ թույլ չի տրվել նրա տեղափոխումը մասնավոր բժշկական կենտրոն՝ առանց հատուկ ցուցման առկայության: Մյուս դատապարտյալը հացադուլ է հայտարարել սեպտեմբերի 5-ից, ցանկանում է տեղափոխվել ավելի ցածր անվտանգային գոտի:

Հացադուլ հայտարարածների հետ պարբերաբար տարվում են բացատրական եւ խորհրդատվական աշխատանքներ հացադուլի բացասական հետեւանքների, իրենց կողմից ներկայացված հարցերը համապատասխան իրավական ընթացակարգերով լուծելու վերաբերյալ: Նշված ազատազրկված անձինք քրեակատարողական հիմնարկին որեւէ դիմում՝ ուղղված այլ մարմնի, չեն ներկայացրել: Դիմումներ ներկայացնելու դեպքում՝ քրեակատարողական հիմնարկը դրանք կուղարկի համապատասխան մարմիններին»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿՐԱԿՈՑ՝ ԳՅՈՒՂՈՒՄ

Մեկ օր առաջ «Մալայանի» անվան ակնաբուժական կենտրոնից ահազանգ է եղել, որ կրակոցի հետեւանքով «աջ աչքի եղջերաթաղանթի բարդ թափանցող վնասվածք, հիֆեմա, հեմոֆթալմ» ախտորոշմամբ իրենց է դիմել Գ. Ա.-ն, որի վիճակը բժիշկները գնահատել են միջին ծանրության:

Դեպքին ընթացք են տվել իրավապահներն ու պարզել, որ Սարանիստ գյուղի սարերում Գ. Ա.-ն իր ընկեր Ս.Մ.- ի հետ որս կատարելիս է եղել, Ս. Մ.-ին պատկանող «ՏՕՋ-66» տիպի որսորդական հրացանը պատահաբար ձեռքից վայր է ընկել, որից հետո կրակոց է արձակվել վերջինիս ուղղությամբ, ինչի արդյունքում Գ. Ա. վնասվածք է ստացել:

ԼՈՒՐԵՐ

ՈՎՔԵՐ ԵՆ ԱՌԵՎԱՆԳՈՂՆԵՐԸ

Սեպտեմբերի 4-ին Երեւանում՝ Աշտարակի խճուղում գործող San Marco լողավազանի տարածքից Միացյալ Նահանգներում հայտնի բիզնեսմենի կնոջն առեւանգողները նրա ամուսնուց պահանջել են 100 հազար դոլար:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ամերիկահայ բիզնեսմենի կնոջն առեւանգողը նրա ընկերն է, որը Քանաքեռ-Զեյթունում հայտնի է «քանաքեռցի Վաչո» անունով: Սեպտեմբերի 4-ին Ազգային անվտանգության ծառայության կեղծ համազգեստով առեւանգում էր տեղի ունեցել Երեւանում: Ժամը 12:10-ի սահմաններում Աշտարակի խճուղում գործող SAN MARCO լողավազանի մոտ 2 հոգի, ովքեր եղել էին Ազգային անվտանգության տարբերանշան ունեցող հագուստով, մոտեցել էին Երեւանի բնակչուհի 55-ամյա Լուսինե Մ.-ին, ներկայացել որպես ԱԱԾ աշխատակիցներ եւ նրան BMW մակնիշի ավտոմեքենայով տեղափոխել անհայտ ուղղությամբ: SHAMSHYAN.com-ը հայտնել է, որ առեւանգված կնոջը Տավուշի մարզի գյուղերից մեկում են գտել, իսկ առեւանգողներին՝ «Զվարթնոց» օդանավակայանից:

ArmLur.am-ին հասած լուրերի համաձայն՝ առեւանգված 55-ամյա Լուսինե Մ.-ի վրա որեւէ հետք չի եղել: Առեւանգված կնոջ ամուսնու ընկերը նրան պահել է անհայտ վայրում ու փող է պահանջել, որը բիզնեսմենը չի կարողացել գտնել: Արդյունքում իրավապահներն են բացահայտել դեպքը:

ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԸ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախկին նախարար Անդրանիկ Փիլոյանը մեղավոր է ճանաչվել: Այս մասին ArmLur.am-ին հայտնի դարձավ հակակոռուպցիոն դատարանից: Դատարանը հրապարակել է վերդիկտը: Մասնավորապես, հակակոռուպցիոն դատարանը՝ դատավոր Տիգրան Դավթյանի նախագահությամբ, հրապարակել է ԱԻ նախկին նախարար Անդրանիկ Փիլոյանի եւ մյուսների գործով վերդիկտը, համաձայն որի՝մեղադրյալներ Վիգեն Գրիգորյանը, Արտակ Բեյբությանը, Վիգեն Մկրտչյանը, Արթուր Օհանյանը եւ Հրաչյա Երեմյանը մեղավոր են ճանաչվել առաջադրված մեղադրանքներում: Արա Յաղջյանն արդարացվել է, Աշոտ Հակոբյանը հոդվածներից մեկով արդարացվել է, մի մասով՝ դատարանը մեղադրանքը վերաորակել է: Նա մեղավոր է ճանաչվել խարդախություն կատարելու համար, որը տեղի է ունեցել մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով եւ խոշոր չափերով: Անդրանիկ Փիլոյանի մեղադրանքի դրվագներից մեկը՝ խոշոր չափերով կաշառք ստանալը (երկու դրվագ) վերաորակվել է ՀՀ ՔՕ 255-րդ հոդվածով՝ խարդախությամբ: Նա մեղավոր է ճանաչվել պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, խարդախության եւ կաշառք ստանալու մեղադրանքներով: Պատժի հարցին դատարանը կանդրադառնա լրացուցիչ դատալսումների փուլում: Լրացուցիչ դատալսումների առաջին դատական նիստը տեղի կունենա սեպտեմբերի 20-ին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 6-ից 9-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 166 դեպք, որից 6-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

«ՀԻՄՆԱՏԱՎՈՒՇ»-Ը 7 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ Է ՎՃԱՐԵԼ ԻՐԱՎԱԲԱՆԻՆ

2022 թ. հունիսի 27-ին «ՀիմնաՏավուշ» հիմնադրամի տնօրեն Մարսել Կեւորկյանը (նույն ինքը՝ Սուրեն Գեւորգյանը) աշխատանքից ազատել է 2012թ.-ից հիմնադրամի իրավաբան Կարապետ Գաբրիելյանին: Պատճառաբանությունն այն է, որ 2022թ. հուլիսի 21-ին տեղի է ունեցել հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստ, որի ընթացքում որոշում է կայացվել՝ հաստատել հիմնադրամի 2022 թ. օգոստոսի 1-ից ուժի մեջ մտնող աշխատակիցների հաստիքացուցակը, համաձայն որի՝ հաստիքացուցակից կրճատվել են ֆերմայի վարիչի, իրավաբանի, անասնաբուծության գծով խորհրդատուի եւ կոոպերատիվների պատասխանատուի հաստիքները: Կ. Գաբրիելյանը առողջական խնդիրների պատճառով այցելել է պոլիկլինիկա, որտեղ 2022 թ. հուլիսի 21-ին նրան տրամադրվել է անաշխատունակության թերթիկ, ըստ որի՝2022 թվականի հուլիսի 21-ից մինչեւ օգոստոսի 1-ը նա գտնվել է անաշխատունակության վիճակում: Կ. Գաբրիելյանը, դիմելով դատարան, խնդրել է անվավեր ճանաչել հիմնադրամի գործադիր տնօրեն Մարսել Կեւորկյանի աշխատանքից իրեն ազատելու հրամանը, վերականգնել նախկին աշխատանքում եւ պատասխանողից հօգուտ հայցվորի բռնագանձել միջին աշխատավարձ՝ սկսած 2022 թ. հուլիսի 27-ից մինչեւ աշխատանքում վերականգնելու ամբողջ ժամանակահատվածը: Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մկրտչյան) 2023 թ. փետրվարի 17-ի վճռով հայցը մերժվել է: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2023 թ. սեպտեմբերի 6-ի որոշմամբ՝ վերաքննիչ բողոքը բավարարվել է, քաղաքացիական գործով դատարանի 17.02.2023 թվականի վճիռը բեկանվել է եւ գործն ուղարկվել է նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության: 2024թ. մարտի 12-ին Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (դատավոր Կ. Արզումանյան) վճռել է հայցը բավարարել մասնակի, անվավեր ճանաչել «ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Մարսել Կեւորկյանի 27.07.2022 թվականի «Կարապետ Գաբրիելյանին աշխատանքից ազատելու մասին» հրամանը, «ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամից հօգուտ Կ. Գաբրիելյանի բռնագանձել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձ՝01.08.2022ժ թվականից մինչեւ վճռի օրինական ուժի մեջ մտնելը՝ «ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամում նրա ստացած միջին աշխատավարձի չափով,«ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամից հօգուտ Կ. Գաբրիելյանի բռնագանձել վերջինիս միջին աշխատավարձի վեցապատիկի չափով գումար, որպես աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում, հայցվոր Կ. Գաբրիելյանի պահանջը՝ իրեն նախկին աշխատանքում վերականգնելու մասին, մերժել: Այդ դատավճիռը չի բողոքարկվել, մտել է օրինական ուժի մեջ: Աս դատավճիռը կատարելով՝ «ՀիմնաՏավուշ» հիմնադրամը մոտ 7 միլիոն դրամ է վճարել Կ. Գաբրիելյանին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

«ԷՔՍՊՈ 2025...»

ՈՐՔԱՆ ԳՈՒՄԱՐ Է ՀԱՏԿԱՑՐԵԼ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Երեք տարի առաջ կնքած պայմանագիրը 2024 թվականին արժեցել է 200 միլիոն դրամ:

Վարչապետի որոշման համաձայն՝ 2021 թվականի դեկտեմբերի 28-ին Հայաստանը հանձն է առել մասնակցելու Ճապոնիայի Օսակա քաղաքում կայանալիք «Ապագա հասարակության ստեղծումը մեր կյանքի համար» խորագրով «ԷՔՍՊՈ 2025 Օսակա, Կանսայ, Ճապոնիա» համաշխարհային ցուցահանդեսին:

Համաձայն որոշման՝ «ԷՔՍՊՈ 2025 Օսակա, Կանսայ, Ճապոնիա» համաշխարհային ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության մասնակցության կազմակերպման աշխատանքների ընդհանուր համակարգման նպատակով հանձնակատար է նշանակվել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարը: Որոշման պահին էկոնոմիկայի նախարարը Վահան Քերոբյանն էր, սակայն հստակ անուն չի նշվել պայմանագրում, ինչը ենթադրում է, որ հավանական է՝ կմասնակցի ներկայիս նախարարը:

Էքսպոյին Հայաստանի մասնակցությանը նվիրված ասուլիսում 2023 թվականին Վահան Քերոբյանն ասել է. «Ցուցահանդեսին Հայաստանը ներկայացված կլինի ամենաբարձր «Ա» դասի տաղավարով եւ հիմնականում 4 ուղղություններով՝ ժամանակակից կրթություն, բարձր տեխնոլոգիաներ, զբոսաշրջություն, հայկական ուտեստներ եւ գինի: Փորձելու ենք նաեւ մեր տաղավարը հագեցնել արհեստական բանականությամբ, թվային տեխնոլոգիաներով, գուցե եւ ռոբոտներով»:

Այսպիսով՝ 2024 թ. օգոստոսին էկոնոմիկայի նախարարությունը դրամաշնորհային մրցույթ ընթացակարգով 200 մլն դրամ է փոխանցել ոչ հայկական MASH Corporation ընկերությանը:

Պայմանագրում առկա ֆինանսական միջոցներով կազմել է 200 մլն դրամ, պայմանագրի ընդհանուր գումարը կազմել է 85 մլն դրամ:

Այս ընկերությունը խոշորագույն կորպորացիա է, որը տրամադրում է համալիր ծառայություններ լայնածավալ մշակութային, սպորտային եւ վիրտուալ միջազգային ցուցահանդեսների կազմակերպման հարցում, աջակցում է Ճապոնիայի ղեկավար մարմիններին խոշորագույն միջոցառումների կազմակերպման եւ մասնակցության հարցում:

Հարկ է նշել, որ Հնդկաստանի Հանրապետության Նյու Դելի քաղաքում կայանալիք World food India 2024 միջազգային ցուցահանդեսին մասնակցելու համար Հայաստանի էկոնոմիկայի նախարարությունը հատկացրել էր 8 մլն դրամ, իսկ Սաուդյան Արաբիայի Ռիադ քաղաքում կայանալիք Foodex Saudi-2024 սննդի եւ ոչ ալկոհոլային խմիչքների միջազգային ցուցահանդեսին մասնակցելու համար՝ 21 մլն դրամ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԻՆՔՆԱԳԼՈՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանում նոր օրենսդրական նախաձեռնությամբ սահմանվում են անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների երթեւեկության կանոնները:

«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին եւ կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթն ԱԺ նիստում ներկայացրեց ներքին գործերի փոխնախարար Դավիթ Համբարյանը:

Օրենսդրական նախաձեռնությամբ տրվել է սահմանումը, թե ինչ է անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցը, ինչպիսին պետք է լինեն դրա հիմնական բնութագրերը, ինչպիսին պետք է լինի այդ միջոցների կահավորումը:

Այսպիսով՝ սահմանվել է անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոց՝ մեկ կամ մի քանի անիվ (գլանափող) ունեցող տրանսպորտային միջոց, որը նախատեսված է էլեկտրական շարժիչի օգտագործմամբ մարդու անհատական տեղաշարժման համար (էլեկտրական սկուտեր, էլեկտրական սքեյթբորդ, գիրոսկուտեր, սեգվեյ, միանիվ եւ այլ նմանատիպ միջոցներ):

«Առանձնացվել է մինչեւ 18 տարեկանների եւ 18 տարեկանից բարձր խմբերը, որոնց համար սահմանվել են համապատասխան վայրեր՝ տվյալ միջոցից օգտվելու համար: Մինչեւ 18 տարեկանների համար սահմանվելու են վայրեր՝ բացառապես ՏԻՄ-ի կողմից, որոնք անվտանգության տեսանկյունից ապահով են: Այսինքն՝ մինչեւ 18 տարեկան անձինք դա կարող են վարել միայն ավագանու կողմից հաստատված հատուկ տարածքներում: Իսկ 18-ից բարձր տարիքային խմբի համար սահմանվել են այն երթեւեկելի մասերը, տարածքները՝ սկսած հեծանվային ուղիներից, վերջացրած ճանապարհների աջ եզրագծերով, որոնցից կարող են օգտվել»,-ասաց փոխնախարարը:

Սահմանվել են նաեւ այն առանձնահատուկ պայմանները, որոնք պետք է պահպանվեն դրանց վարման ժամանակ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենքով նախատեսվել են նաեւ վարչական իրավախախտումներ ինչպես անհատների համար, այնպես էլ տվյալ տրանսպորտային միջոցը վարձակալությամբ տրամադրող կազմակերպությունների համար:

Ըստ նրա՝ նախագծի ընդունումը հնարավորություն կտա ամբողջությամբ կանոնակարգել ոլորտը:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 52 պատահար. 2 մարդ զոհվել է, 70-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՔՎՈՏԱ

ՄԱՔՍԱՏՈՒՐՔԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ

Պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 24.11.2023թ. N 134 եւ ՀՀ կառավարության 28.12.2023թ. N 2307-Ն որոշումներով ԱՏԳ ԱԱ 8703 80 000 2 ծածկագրին դասվող էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների համար 0% ներմուծման մաքսատուրքի արտոնությամբ ձեւակերպելու քվոտան 2024 թվականի համար սահմանվել է 7400 հատ տրանսպորտային միջոցի մասով:

«Սա նշանակում է, որ 7400-ը գերազանցող յուրաքանչյուր հաջորդ էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցի ձեւակերպման համար ԵՏՄ ընդհանուր կանոններով սահմանված կարգով 2024 թվականին կկիրառվի 15% ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ:

2024թ. հունվար-օգոստոս ամիսներին եւ սեպտեմբեր ամսվա 1-ից 8-ն ընկած ժամանակահատվածում, արդեն իսկ, ձեւակերպվել է թվով 6285 էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոց, այսինքն՝ 2024թ. սեպտեմբերի 9-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար 0% ներմուծման մաքսատուրքի արտոնությամբ կարող է ձեւակերպվել դեռեւս 1115 հատ:

Միաժամանակ, կոմիտեն տեղեկացնում է, որ օրենսդրության համաձայն՝ տվյալ սակագնային քվոտայից հնարավոր չի լինի օգտվել դեռեւս ՀՀ չներմուծված տրասնպորտային միջոցի համար նախնական մաքսային հայտարարագրի ներկայացման դեպքում, քանի որ արտոնության կիրառման նպատակներով նախնական մաքսային հայտարարագրման դեպքում, ապրանքի հայտարարագրի գրանցում է համարվելու օրենսդրությամբ նախատեսված տեղեկությունների ներկայացման արդյունքում մաքսային մարմինների կողմից նախնական մաքսային հայտարարագրում ճշգրտումների գրանցումը: Ճշգրտման գրանցումը հնարավոր կլինի իրականացնել միայն տվյալ տրանսպորտային միջոցի՝ Հայաստանի Հանրապետություն փաստացի ներմուծման դեպքում եւ արդյունքում սակագնային արտոնության կիրառումը կախված կլինի տվյալ օրվա դրությամբ 0 տոկոս մաքսատուրքի արտոնության կիրառման համար սահմանված 7400 հատ տրանսպորտային միջոցների քանակի լրացված չլինելու հանգամանքից:

ՊԵԿ-ը նաեւ հիշեցնում է, որ 2025 թվականի համար ԱՏԳ ԱԱ 8703 80 000 2 ծածկագրին դասվող էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների համար եւս սահմանված է 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ՝ 8000 տրանսպորտային միջոցների համար: 2025 թվականի քվոտայից օգտվելու համար անհրաժեշտ կլինի ՀՀ ներմուծված տրասնպորտային միջոցի համար մաքսային հայտարարագիրը կամ մաքսային մուտքի օրդերը ներկայացնել եւ գրանցել 01.01.2025 թվականից սկսած:

Միաժամանակ, ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն՝ մինչեւ 01.01.2026 թ. շարունակելու է գործել էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների ներմուծման ԱԱՀ-ից ազատման արտոնությունը, որի գծով քանակային սահմանափակում առկա չէ»,-ասված է հաղորդագրության մեջ:

Nokia ԵՎ Team Telecom Armenia

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍԱՆԵԼԻ ԿԼԻՆԵՆ ՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Երեկ Nokia-ն հայտարարեց, որ Team Telecom Armenia-ն կիրառել է իր 25G PON օպտիկամանրաթելային լուծումը՝ դառնալով այն առաջին օպերատորներից մեկը Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջաններում, որն ապահովում է շուկայում առկա ամենաարագ ինտերնետ արագությունը: 25G PON-ի կիրառումը նախատեսված է B2B բաժանորդների համար եւ իրական սիմետրիկ 20 Գբիթ/վրկ լայնաշերտ արագություններ է առաջարկում, որոնք կարեւոր են թվային տնտեսությունն առաջ մղող նոր հավելվածների եւ բիզնես ծառայությունների համար:



Nokia-ի օպտիկամանրաթելային լայնաշերտ լուծումներն օպերատորներին իրենց ցանցերն օպտիմալացնելու ընտրություն եւ ճկունություն են տալիս՝ իրենց հատուկ բիզնես նպատակներն ու կարիքները բավարարելու համար, քանի որ նախագծված են այնպես, որ սպասարկեն PON տեխնոլոգիաների ողջ տեսականին՝ GPON-ից մինչեւ 25G PON ու ավելին: Nokia 25G PON լուծումը հիմնված է Quillion chipset-ի վրա, ինչը Team Telecom Armenia-ին թույլ է տալիս վերօգտագործել գործող օպտիկամանրաթելային լայնաշերտ սարքավորումները՝ բավարարելու ավելի մեծ հզորությունների եւ բարելավված լայնաշերտ ծառայությունների պահանջարկը: Նոր 25G PON առաջարկը կօգնի Team Telecom Armenia-ին ավելի արագ կապ ապահովել իր բաժանորդներին եւ հիմք կդառնա նոր՝ ընդլայնված ծառայություններ մշակելու եւ առաջարկելու համար, ինչպիսիք են խոշոր ընկերությունների համար նախատեսված լուծումները, 5G շարժական տրանսպորտը եւ ցանցային մեծածախ առեւտուրը:

Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը նշում է. «Մենք Հայաստանում տեխնոլոգիական հեղափոխության առաջնագծում ենք, որը մեր հաճախորդների համար ինտերնետի արագության եւ հուսալիության նոր չափանիշներ կսահմանի: Լինելով ազգային օպերատոր՝ Team-ում այս նախագիծը ընդունում ենք որպես լայնաշերտ ծառայությունները ոչ միայն Երեւանում, այլ նաեւ նոր թվային հնարավորությունները ողջ երկրում խթանելու մեր առաքելության մի մաս: Nokia-ի նորագույն տեխնոլոգիաների օգտագործումը նշանակում է, որ մենք հզորացնում ենք մեր ցանցը եւ երաշխավորում մեր հաճախորդների լավագույն առցանց փորձառությունն այժմ եւ ապագայում»:

Nokia-ի ցանցային ենթակառուցվածքի բիզնեսի գծով ավագ փոխնախագահ եւ Եվրոպայի ղեկավար Մաթյո Բուրգինյոնը մեկնաբանել է. «Մեր համագործակցությունը նշանակալի իրադարձություն է Կովկասյան եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջաններին՝ Nokia-ի առաջադեմ PON տեխնոլոգիաների կիրառմամբ, գերարագ լայնաշերտ կապի ապահովման դիտանկյունից: Այս նախաձեռնության շնորհիվ Հայաստանում կապը բարելավվելու է ոչ միայն անհատների եւ բիզնեսների համար, այլեւ վճռորոշ դեր է խաղալու երկրի տնտեսական եւ սոցիալական զարգացման հարցում»:

Այսօր Team Telecom Armenia-ի ցանցը, որը հիմնված է Nokia-ի 25G PON տեխնոլոգիայի վրա, ընդգրկում է շուրջ 300,000 տնային տնտեսություն ողջ Հայաստանի Հանրապետությունում, ցանցի կառուցման աշխատանքներն ակտիվորեն շարունակվում է:

- Nokia-ն օգնում է Team Telecom Armenia-ին՝ դառնալու 25G PON տեխնոլոգիայով ծառայություններ ներդնող առաջին օպերատորը Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում:
- Nokia-ի օպտիկամանրաթելային լուծումը օպերատորներին հնարավորություն է տալիս 2,5, 10 եւ 25 Գբիթ/վրկ թողունակությամբ արագություն ապահովել իր գործող օպտիկամանրաթելային ցանցի միջոցով:
- Nokia-ն միակ մատակարարն է, որն առաջարկում է հաջորդ սերնդի PON տեխնոլոգիայի բոլոր տարբերակները՝ թույլ տալով օպերատորներին ճիշտ ռազմավարություն ընտրել իրենց կարիքների եւ բիզնեսի համար:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՄԱՔՍԱՆԵՆԳ ԴԵՊՔԵՐ

Մաքսանենգության եւ մաքսային կանոնների խախտման դեպքերի վերաբերյալ ՊԵԿ-ը ներկայացրել է շաբաթվա պատկերը.

- մաքսային ծառայողները կանխել են 2500 կգ չհայտարարգրված ալյուրի տեղափոխման փորձը,
- չհայտարարագրված ավտոմեքենայի յուղի ներկրման փորձ է կանխվել,
- օդային ճանապարհով փորձ է արվել Հայաստանի Հանրապետություն ներմուծել առանց հայտարարագրման հուշադրամներ,
- բեռնատարի մաքսային զննության արդյունքում հայտնաբերվել են չհայտարարագրված տնտեսական ապրանքներ,
- փորձ է արվել ներկրել չհայտարարագրված մոտ 500 կգ քաշով մետաղոպլաստե խողողակներ:

ԿԱՆԱՉ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Լատվիայի Հանրապետություն կատարած այցի շրջանակներում նախարար Գեւորգ Պապոյանը այցելել է «EggEnergy» ընկերություն, որը զբաղվում է շրջանաձեւ կանաչ տնտեսության զարգացմամբ՝ էներգիայի այլընտրանքային աղբյուրների եւ տեխնոլոգիական ինովացիաների կիրառմամբ:

Նախարարին ուղեկցել է նաեւ նախարարի տեղակալ Նարեկ Հովակիմյանը:

Ընկերությունը թռչնաբուծական գոմաղբից արտադրում է բիոգազ՝ տարեկան 10 մլն խմ եւ օրգանական պարարտանյութեր:

Նախարարը շրջել է ընկերության տարածքով, ծանոթացել արտադրական գործընթացներին եւ ներուժին:

Գեւորգ Պապոյանը ընդգծել է շրջակա միջավայրի պաշտպանության տեսանկյունից կանաչ շրջանաձեւ գյուղատնտեսության անհրաժեշտությունը եւ կարեւորությունը:

Երկուստեք պայմանավորվածություն է ձեռք բերվել սեպտեմբեր ամսին ընկերության ներկայացուցիչների այց կազմակերպել Հայաստանի Հանրապետություն՝ համագործակցություն հաստատելու եւ իրենց կողմից կիրառվող տեխնոլոգիաները ՀՀ-ում ներդնելու նպատակով:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ ԿԱՄ ՀԱԿԱՌԱԿԸ

ԻՆՉ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ

«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է օրենսդրական դաշտի նույնականացման անհրաժեշտությամբ, որը կնպաստի պետության կողմից իրականացվող մշակութային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը եւ ոլորտի առավել արդյունավետ կառավարմանը: Այժ՝ սեպտեմբերի 9-ի նիստում հարցը ներկայացնելով՝ ասել է ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը:

Նախատեսվում է, որ նախագծի ընդունմամբ առավել կկանոնակարգվի մշակույթի օրենսդրական դաշտը, կդյուրանա ոլորտի կառավարումը եւ կբարձրանա ֆինանսական, գույքային եւ կադրային կառավարման արդյունավետությունը:

Առաջարկվող փոփոխությունները վերաբերում են Մշակույթի զարգացման հիմնադրամի գործունեությանն ու գործառույթներին, «ինքնազբաղ արվեստագետ» եւ «մշակութային գործունեությամբ զբաղվող անձ» եզրույթների հստակեցմանը, մշակութային կազմակերպություններին «պետական» կարգավիճակ շնորհելու գործընթացի արժեւորմանը, պետության կողմից ստեղծարար ոլորտի խթանման եւ զարգացման համատեքստում մշակույթի ոլորտում անվանական թոշակների սահմանմանը:

Ըստ նախագծի՝ աշխարհում եւ Հայաստանում, մասնավորապես մշակույթի ոլորտում ընթացող վերջին տարիների զարգացումներով պայմանավորված՝ առանցքային է օրենքում «ինքնազբաղ/անկախ ստեղծագործողների» եզրույթի սահմանումը, որը միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված «self-employed artist» եզրույթն է: «Ինքնազբաղ/անկախ ստեղծագործող» ասելով՝նկատի է առնվում որեւէ ստեղծագործական աշխատողների միության չանդամակցող եւ քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող անձ, ինչպես նաեւ անհատ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձ, ով գրանցված է հարկային դաշտում եւ ինքնուրույն իրացնում է իր ստեղծած արտադրանքը:

Առաջարկվում է սահմանել նաեւ «Մշակութային գործունեությամբ զբաղվող անձ» հասկացությունը, որը նշանակում է մշակույթի որեւէ ոլորտում գործունեություն իրականացնող կամ մշակութային ոչ առեւտրային կազմակերպության հաստիքացուցակում ներառված ֆիզիկական անձ, ով զբաղվում է ստեղծագործական գործունեությամբ:

Առաջարկվում է նաեւ օրենքի 26-րդ հոդվածի որոշ մասերում առկա «ազգային» բառը փոխարինել «պետական» բառով:

Նշենք, որ նախագծով առաջարկվում է «պետական» անվանումը շնորհել միայն այն կազմակերպություններին, որոնք ունեն համապետական նշանակություն: Ներկայում համապետական նշանակության կազմակերպությունների տարբերակումն իրականացվում է «ազգային» բառի օգտագործմամբ, մինչդեռ առավել նպատակային է համարվում, որպեսզի նշյալ կազմակերպությունների նկատմամբ կիրառվի «պետական» բառը, ինչը կվկայի այդ կազմակերպությունների եզակիության, կարեւորության, պետության կողմից դրանց առանձնակի արժեւորման մասին:

Այժ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունը նախագծի վերաբերյալ ներկայացրել է հանձնաժողովի փոխնախագահ Թագուհի Ղազարյանը:

Այժ ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության անունից ելույթ է ունեցել պատգամավոր Լիլիթ Գալստյանը: Պատգամավորի խոսքով՝ քննարկվող նախագծում առկա են որոշակի անհստակություններ, առաջարկվում է կատարել փոփոխություններ, որոնք, ըստ պատգամավորի, կեղծ են եւ մտացածին: Կեղծ եւ մտացածին ասելով՝ պատգամավորն ի նկատի ուներ օրենքում «ազգային» բառի փոխարինումը «պետական» բառով:

Պատգամավորն առաջարկել է հետաձգել նախագծի ընդունումը եւ այն քննարկել շահառու կազմակերպությունների, ինքնազբաղների, «ազգային» կարգավիճակ ունեցող կազմակերպությունների, մշակութային դաշտի այլ շահառուների հետ:

Առաջարկը չի ընդունվել:

Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Coca-Cola 2024-Ի ՄԱՄՆԱԿԻՑ ԱՍՏՂԵՐԸ

Սեպտեմբերի 7-ին տեղի ունեցավ Music Fest with Coca-Cola 2024-ը:

Միջոցառմանը մասնակցում էին մի շարք հայտնի հայ արտիստներ, ինչպես նաեւ աշխարհահռչակ այլազգի արտիստներ: Հայ աստղերից մասնակցություն են ունեցել Իվետա Մուկուչյանը, Սիրուշոն, Սոնա Ռուբենյանը, Արամ MP3-ին, Ներսես Ավետիսյանը, Ռոզեն Թալը, Լյոկան, Menq Project-ը, Լավ էլի-ն, Project 12 խումբը:

Խմբի անդամներից Brunette-ը հանդես է եկել նաեւ անհատական երգով

Արտասահմանյան արտիստներից հայ հանդիսատեսին է ներկայացել Gradusy-ը, John Newman-ը եւ այլք: Հանդիսատեսը շատ մեծ ջերմությամբ եւ ոգեւորությամբ է ընդունել արտիստներին:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՓԱՌԱՏՈՆԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երեւանի քաղաքապետարանի կողմից «Թատերական Երեւան» ծրագրի շրջանակում դեռեւս անցյալ տարի հայտարարվել էր թարգմանական մրցույթ, որը նպատակ ուներ խթանելու ժամանակակից դրամատուրգների ստեղծագործությունների բնագրային թարգմանությունը:

Մասնավորապես, առաջին անգամ հայերեն են թարգմանվում Հարոլդ Փինթերի, Սառա Քեյնի, Էրիկ Էմանուել Շմիտի, Քզավիե Դյուրանժեի եւ Ուաժդի Մուաուադի պիեսները:

Գրքի երեւանյան յոթերորդ փառատոնի շրջանակում «Միեր Մկրտչյան» արտիստական թատրոնում տեղի ունեցավ օրերս տպագրված գրքերի շնորհանդեսը:

Առաջիկայում կհայտարարվի «Թատերական Երեւան 2024» մրցույթը, որին դիմելով՝ ՀՀ-ում գործող թատրոններն ու թատերական նախաձեռնությունները, բեմադրելով վերոնշյալ դրամատուրգների ստեղծագործությունները, հնարավորություն կունենան դրամական աջակցության արժանանալու:

Նշենք նաեւ, որ գրքի երեւանյան միջազգային փառատոնի փակման արարողության ժամանակ հայտնի դարձան «Պոեզիա», «Արձակ», «Դրամատուրգիա», «Մանկապատանեկան գրականություն» անվանակարգերի կարճ ցանկերում հայտնված գրողները եւ հաղթողները:

Փառատոնի հաղթողներն են.

«Դրամատուրգիա» անվանակարգ՝Վահագն Դաբաղյան

«Պոեզիա» անվանակարգ՝ Ռազմիկ Գրիգորյան

«Մանկապատանեկան գրականություն» անվանակարգ՝Մարիամ Հերգնյան

«Արձակ» անվանակարգ՝ Հրաչյա Մանուկյան

Հատուկ մրցանակ՝Արամ Ավետիս:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ

ՈՒԵՖԱ Ազգերի լիգայի խաղարկության երկրորդ մրցափուլի՝ Հյուսիսային Մակեդոնիա-Հայաստան հանդիպումը կսպասարկի գերմանական մրցավարական անձնակազմը:

Հանդիպման մրցավար է նշանակվել Հարմ Օսմերսը, մրցավարի օգնականներ՝ Դոմինիկ Շալը եւ Ստեֆան Լուպը: Հանդիպման չորրորդ պաշտոնյան կլինի Ֆլորիան Էքսները: VAR-ի մրցավար է նշանակվել Սյորեն Ստորկսը, VAR-ի մրցավարի օգնական՝Յոհան Պֆայֆերը:

Հյուսիսային Մակեդոնիա-Հայաստան հանդիպումը կկայանա այսօր՝ սեպտեմբերի 10-ին՝ժամը 22:45-ին (Երեւանի ժամանակով) Սկոպյեի «Տոդոր Պրոյեսկի Արենայում»:

ՊԱՐԱԼԻՄՊԻԿ ԽԱՂԵՐ

Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում ավարտվել են 2024 թվականի Պարալիմպիկ խաղերը, որին Հայաստանի 3 ներկայացուցիչ է մասնակցել:

Առաջինը պայքարի է դուրս եկել աշխարհի ու Եվրոպայի բազմակի չեմպիոն Սարգիս Ստեփանյանը՝ հանդես գալով F55 սպորտային դասակարգմամբ: Պարաաթլետիկա մարզաձեւի գնդի հրում վարժությունում Ստեփանյանը 10,41 մետր արդյունքով զբաղեցրել է 8-րդ տեղը:

Հայաստանի մյուս ներկայացուցիչ Սմբատ Կարապետյանը Փարիզի Պարալիպիկ խաղերի սայլակավազք մարզաձեւի T54 դասակարգման խմբում 14 մասնակիցների պայքարում 16:98 վայրկյան արդյունքով զբաղեցրել է 12-րդ տեղը: Կարապետյանը Փարիզի «Ստադ դե Ֆրանս» մարզադաշտում հանդես է եկել սայլակավազք մարզաձեւի 100մ մրցավազքում:

Հայաստանի վերջին ներկայացուցիչ, պարաձանրորդ Գրետա Վարդանյանն էլ գրավել է 6-րդ հորիզոնականը՝ անձնական երեք ռեկորդ սահմանելով: Նախ նա բարձրացրել է 104 կգ, 108 կգ կշռող ծանրաձողերը, ապա ուժերի գերլարումով հաջող է կատարել 114 կգ քաշով մոտեցումն ու զբաղեցրել 6-րդ տեղը:

Մրցելույթներից հետո Հայաստանի պարալիմպիկ հավաքականի անդամները Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Ֆրանսիայի մասնաճյուղի գրասենյակում հանդիպել են հայ համայնքի ներկայացուցիչների ու երկրպագուների հետ: Միջոցառմանը ներկա են եղել նաեւ ՀԲՄԸ Ֆրանսիայի մասնաճյուղի նախագահ Նադյա Գործունյանը, Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտեի նախագահ Հակոբ Աբրահամյանը, Ֆրանսիայում ՀՀ դեսպան Հասմիկ Տոլմաջյանը, Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավոր Աստրիդ Փանոսյանը, հայկական համայնքային կազմակերպությունների ներկայացուցիչներ, բազմաթիվ ֆրանսիահայեր եւ ֆրանսիացիներ: Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտեի նախագահ Հակոբ Աբրահամյանը, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, նշել է, որ մրցումների ողջ ընթացքում մեր մարզիկները զգացել են Ֆրանսիայում Հայաստանի դեսպանության եւ հայ համայնքի աջակցությունը, ինչը քաջալերել է նրանց գերազանցել երբեւէ գրանցած արդյունքները եւ նոր հաջողություններ արձանագրել:

● Սեպտեմբերի 12-ին Երեւանի պետական կամերային թատրոնում կբեմադրվի սպասված պրեմիերա՝ «ԱԶՆԱՎՈՒՐ. ճանապահորդություն ժամանակի եւ երաժշտության միջով» ներկայացումը:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ովքեր ունեն հաշմանդամության կենսաթոշակի իրավունք:

Անիտա Սահակյան
(37 տարեկան, տնային տնտեսուհի)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ա. Ջիլավյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի իրավունք ունեն այն անձինք, որոնք հաշմանդամ են դարձել՝

1) աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետեւանքով՝ անկախ աշխատանքային ստաժից,

2) ընդհանուր հիվանդության, մանկուց հիվանդության, բնական, տեխնածին եւ այլ աղետների հետեւանքով, եթե հաշմանդամություն սահմանելու ժամանակ ունեցել են հետեւյալ աշխատանքային ստաժը՝

(տարիքային խումբը/աշխատանքային ստաժը՝ օրացուցային տարիներով)

մինչեւ 23 2 տարի
23-ից մինչեւ 26 3 տարի
26-ից մինչեւ 29 4 տարի
29-ից մինչեւ 32 5 տարի
32-ից մինչեւ 35 6 տարի
35-ից մինչեւ 38 7 տարի
38-ից մինչեւ 41 8 տարի
41-ից մինչեւ 44 9 տարի
44-ից բարձր 10 տարի

Հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի իրավունք չունեցող հաշմանդամներին նշանակվում է հաշմանդամության նպաստ:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը մինչեւ կենսաթոշակառուի՝ տարիքային կենսաթոշակի իրավունք ձեռք բերելը նրա ցանկությամբ փոխում է կենսաթոշակի տեսակը: Տարիքային կենաթոշակի իրավունք ձեռք բերելու դեպքում արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության կամ մասնակի կենսաթոշակի փոխարեն, անկախ կենսաթոշակառուի դիմումից՝ նշանակվում է տարիքային կենսաթոշակ, իսկ հաշմանդամության կենսաթոշակ կամ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու կամ այդ իրավունքը ձեռք բերելու դեպքում կենսաթոշակի տեսակը փոխվում է՝ կենսաթոշակառուի գրավոր դիմումի համաձայն:

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ովքե՞ր կարող են օգտվել ուսման վարձի զեղչից նախնական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Լաուրա Ասլանյան (50 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Ուսումնական հաստատությունը կարող է վճարովի հիմունքով սովորող ուսանողական համակազմի մինչեւ տասը տոկոսին, հաշվի առնելով ուսանողի սոցիալական վիճակը եւ բարձր առաջադիմության արդյունքները, իր միջոցների հաշվին մասնակի փոխհատուցել ուսման վճարը՝

1) սոցիալապես անապահով ուսանողներին,
2) միակողմանի ծնողազուրկ ուսանողներին,
3) 3 եւ ավելի անչափահաս կամ 3 եւ ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին,
4) վճարովի ուսուցման համակարգում երկու եւ ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին,
5) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ ծնող ունեցող ուսանողներին,
6) հեռավոր լեռնային եւ սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա ուսանողներին,
7) մինչեւ մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին,
8) ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված՝ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ ուսումնական հաստատության հայեցողությամբ:

ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետության կողմից կրթաթոշակ տրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ուսումնական հաստատությունների ուսանողներին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Սեպտեմբերի 7-ին մեկնարկեց «Ազնավուրը կինոյում» ռետրոսպեկտիվ ցուցադրությունը. Կարապի լճի հարակից այգում Ազնավուրի արվեստի երկրպագուները շուրջ 4 օր հնարավորություն ունեն դիտելու նրա՝ մի քանի տասնամյակների ընթացքում նկարահանած նյութերի հիման վրա ստեղծված «Ազնավուրը Շառլի աչքերով» վավերագրական ֆիլմը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+11 + 16	+24 + 29
Կոտայքի լեռներ	+10 + 16	+27 + 29
Կոտայքի նախալեռներ	+20 + 23	+29 + 30
Գեղարքունիք	+11 + 16	+25 + 28
Լոռի	+14 + 18	+29 + 33
Տավուշ	+18 + 22	+30 + 33
Արագածոտնի լեռներ	+11 + 14	+17 + 20
Արագածոտնի նախալեռներ	+16 + 18	+27 + 31
Արարատ	+23 + 25	+33 + 37
Արմավիր	+20 + 22	+30 + 32
Վայոց ձորի լեռներ	+11 + 14	+29 + 31
Վայոց ձորի նախալեռներ	+21 + 23	+32 + 36
Սյունիքի հովիտներ	+21 + 24	+33 + 35
Սյունիքի նախալեռներ	+14 + 17	+29 + 32
ԼՂՀ	+13 + 16	+29 + 31
Երեւան	+25 + 27	+31 + 33

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **9.9.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*